

2021

ԿԱՆԱՅԲ

ՀԱԳՈՐՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐԿԻՆ



ՀՀ տարածքային
կառավարման և
ենթակառուցվածքների
նախարարություն



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development
and Cooperation SDC



Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by

giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH



«Աջակցություն դրամաշնորհների կառավարման գործընթացին կանանց հզորացման համար» ծրագիրն իրականացվում է ՀԿ Կենտրոնի կողմից՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Յարավային Կովկասում» ծրագրի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) աջակցությամբ՝ Շվեյցարիայի և Գերմանիայի կառավարությունների կողմից համաֆինանսավորվող «Տեղական ինքնակառավարման համակարգի բարելավումը Հայաստանում» ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում:

Սույն հրատարակության մեջ առկա տեսակետները անպայմանորեն չեն արտացոլում ԳՄՀԸ, ՄԱԶԾ, ԾԶՀԳ կամ համապատասխան կառավարությունների դիրքորոշումները: Բովանդակության համար պատասխանատվությունը լիովին կրում են հեղինակները:

ngo
center

«**ՀԿ Կենտրոն**» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ն 2020 թվականի դեկտեմբերից մինչև 2021 թվականի մայիս ամիսն իրականացրել է **«Աջակցություն դրամաշնորհների կառավարման գործընթացին կանանց հզորացման համար»** ծրագիրը: Ծրագրի շահառուներն էին ՀՀ տարբեր մարզերում տեղական ինքնակառավարման մարմիններում ներգրավված 21 կանայք, ովքեր նախապես մասնակցել էին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված կանանց առաջնորդության զարգացման միջոցառումներին:

Ծրագրի նպատակն է՝ կազմակերպել և իրականացնել դրամաշնորհների կառավարում ԳՄՀԸ-ի կողմից իրականացվող **«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում»** ծրագրի և ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող **«Կանայք եւ երիտասարդները նորարար տեղական զարգացման գործընթացներում»** ծրագրի շահառուների համար ի նպաստ կանանց հզորացմանը, քաղաքացիների մասնակցությանը, տվյալների վրա հիմնված պլանավորմանը, թափանցիկությանն ու հաշվետվողականությանը Հայաստանի տարբեր մարզերում:

Ակնհայտ է, որ քաղաքացիական հասարակության (ԸՀ) այդ թվում կանանց ձեռքբերումներն այսօր առավել ընդգրկուն են: ԸՀ ծավալուն դերակատարությունը թելադրված է նաև մերօրյա բազմաբնույթ մարտահրավերներով, որոնց արձագանքելու ջանքերն առավել արդյունավետ դարձնելու նպատակով ՀԿ Կենտրոնն իր ներդրումն է կատարում քաղաքացիական հասարակության զարգացման գործում՝ կրթական, խորհրդատվական, հետազոտական, տեղեկատվական և կարողությունների զարգացման ծառայություններով և ծրագրերով: Մենք հավատում ենք, որ քաղաքացիների նպատակային և բանիմաց հանձնառությունը մեր հասարակության բարօրությանը նպաստող հիմնարար գործոն է:

Հենց այս գաղափարախոսության ներքո էլ մենք հանձնառու ենք դարձել աջակցելու **ՏԻՄ համակարգում** ներգրավված կանանց՝ իրենց կարողությունների զարգացման, համայնքներում որպես առաջնորդներ հանդես գալու և բնակավայրերում դրական փոփոխություններ կատարելու ընթացքում: Մենք հավատում ենք, որ կարողությունների համալիր զարգացումն ու կանանց հզորացումը կարող է բերել տնտեսական, գիտական և համայնքային **կանոնավոր զարգացման ու կայացման**:

Մեր շնորհակալությունն ենք հայտնում մեր գործընկեր կառույցներին, առանց որոնց այս կարևորագույն առաքելությունը չէին կարող իրականացնել: Այսօր կարող ենք փաստել, որ **Հայաստանի ՏԻՄ համակարգում ներգրավված են առնվազն 21 կին**, ովքեր առավել կոմպետենտ են համայնքային կյանքի մասնակցության ու առաջնորդության ոլորտում՝ ներառյալ նախագծերի իրականացման և փաստափեմ քաղաքականությունների մշակման ոլորտներում:

«Տեղական ինքնակառավարմանը մասնակցության դպրոց երիտասարդ մայրիկների համար» ծրագիր

01



ԱՐՈՒՄՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

50 տարեկան, 33 Կոտայքի մարզ, Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

«Տեղական ինքնակառավարման մասնակցության դպրոց երիտասարդ մայրիկների համար» ծրագրի նպատակն էր **նպաստել Աբովյան համայնքում** տեղական ինքնակառավարմանը երիտասարդ մայրիկների մասնակցության մակարդակի բարձրացմանը:

Ծրագրի խնդիրներն էին

1. Նպաստել համայնքի երիտասարդ **մայրիկների իրավագիտակցության բարձրացմանը.**
2. Աջակցել հանրային հարցերի քննարկումներին, համայնքային **միջոցառումներին երիտասարդ կանանց ներգրավմանը.**
3. Երիտասարդ մայրիկների մոտ խթանել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից **որոշումների կայացման վրա ազդեցություն ունենալու դրդապատճառների ձևավորմանը.**

«Ծրագրի իրականացումը օգնեց ոչ միայն նպաստել ծրագրի շահառու կանանց իրավագիտակցության բարձրացմանը և համայնքային գործերի կառավարմանը նրանց մասնակցության մակարդակի բարձրացմանը, այլ նաև լավ առիթ և հնարավորություն հանդիսացավ համայնքի բնակիչների հետ անմիջականորեն շփվելով՝ ավելի մոտիկից ծանոթանալու բնակիչներին հուզող հանրային հարցերին և հասկանալու առկա հիմնախնդիրների խորության աստիճանը: Ծրագրի իրականացման ընթացքում ինձ մոտ ձևավորվեց հանրային հարցերի նկատմամբ պատասխանատվության առավել մեծ շրջանակ, որը սիրով կատանձնեմ իմ մասնագիտական գործառույթների պատշաճ և որակով ապահովելուն զուգընթաց: Համայնքի բնակիչների հետ ստեղծված ջերմ և փոխադարձ վստահության մթնոլորտում ծավալված անկաշկանդ երկխոսությունը օգնեց հասկանալու, որ ինձ մոտ մոտ կան առաջնորդական հմտություններ, որոնք անհրաժեշտ է կիրառել հարազատ համայնքը և նրա բնակիչներին ավելի մեծ սիրով և նվիրվածությամբ ծառայելու համար»:





“

Երիտասարդ կանայք պետք է լինեն առավել ակտիվ, համարձակորեն բարձրացնեն հանրային նշանակության հարցեր, հետևողականորեն նպաստեն դրանց լուծմանը և տեղական իշխանությունների հետ համատեղ, փոխադարձ վստահության մթնոլորտում, կառուցեն զարգացող ու բարեկեցիկ համայնք իրենց երեխաների համար:

”



«Բյուջեի թափանցիկության ապահովում» ծրագիր

02



ԱԼՎԱՐԴ ԱՎԵՏԻՔՅԱՆ

40 տարեկան, Անտառամուտ համայնք, ավագանու անդամ

Ծրագրի նպատակն էր՝ խթանել Անտառամուտ համայնքում բնակիչների ներգրավվածությունը որոշումների կայացման, հնգամյա զարգացման ծրագրի և տարեկան աշխատանքային պլանի նախագծի մշակման գործընթացներում /մասնակցային լինելու 20%-ի չափով/:

Ծրագրի խնդիրներն էին՝

1. Հանրայնացնել Անտառամուտ համայնքում իրականացված **գեղերային հետազոտության** արդյունքները շահագրգիռների շրջանում:
2. Ձևավորել կանանց **նախաձեռնող խումբ**՝ առաջարկությունների փաթեթի հետագա ջատագովության նպատակով
3. Հարգացնել նախաձեռնող խմբի կարողությունները **շահերի պաշտպանության** ոլորտում:
4. Իրականացնել **գեղերային բաղադրիչի մեյնսթրիմ/ներառում** SUՊ-ի մշակման ընթացքում:

«Քանի որ հաճախ է լինում, երբ տարբեր է քո և որոշում կայացնող այլ անձնանց մտածելակերպն ու հայացքները համայնքային խնդիրների և դրանց լուծման շուրջ, սկսում ես մտածել, ինչ-որ փոփոխություն կատարել նպատակիդ հասնելու համար և այս ծրագիրն էլ նպաստեց իրագործելու իմ նպատակներից մեկը: Երկար տարիների փորձն է միայն առանձնահատուկ և փորձառու դարձնում առաջնորդության մեջ»:



“

Բոլոր կանանց կոչ եմ անում կայացնել հաստատուն որոշում՝ առաջադրելով իրենց թեկնածությունը և հաղթահարելով ցանկացած խոչընդոտ, որոնցից չպետք է խուսափել, վախենալ կամ հուսալքվել:

”



«Կանանց հզորացում և ներգրավվածության խթանում» ծրագիր

03



ՆԱԻՐԱ ԱՔՐԱՅԱՄՅԱՆ


54 տարեկան, Արփի համայնք, ավագանու անդամ 13 տարի

Ծրագրի նպատակն էր՝ խթանել Շիրակի մարզի Ամասիա և Արփի համայնքների կանանց մասնակցությունը տեղական ինքնակառավարման համակարգում որոշումների կայացմանը

Ծրագրի խնդիրներն էին՝

1. Զարգացնել թիրախ համայնքների կանանց **գիտելիքներն ու կարողությունները** ՏԻՄ ընտրություններին մասնակցության ոլորտում
2. Ավելացնել **քաղաքացիական նախաձեռնությունները**
3. Աջակցել **ՏԻՄ ընտրություններին** կանանց մասնակցության ընդլայնմանը

«Ծրագրի ընթացքում համայնքի ակտիվ կանանց հետ համագործակցությունը, նոր գիտելիքների հաղորդումն ու տարիների փորձը ցույց տվեց, որ չի կարելի սկսած գործը կիսատ թողնել: Առաջիկա ՏԻՄ ընտրություններում վստահաբար առաջադրվելու ենք թիմով: Ես ավելի վստահ եմ ինձ զգում, որ իրականում կարող եմ լավ առաջնորդ լինել: Սեմինարների և կլոր-սեղան քննարկումների հրավերները ոչ-ոքի կողմից չեն մերժվել: Բոլորը հաճույքով մասնակցել են հանդիպումներին և առաջարկել են միանալ իմ նախաձեռնությանը: Սա ինձ ոգևորել է և վստահաբար ուժ հաղորդել, որ դառնամ համայնքային լավ առաջնորդ»:





“ Դժոխքի ամենախավար տեղանքները նրանց համար են, ովքեր չեզոքություն են պահպանել բարոյական ճգնաժամի պահերին: ”



«Կանայք հանուն ուժեղ համայնքի» ծրագիր

04



ԼԻԼԻԹ ՄԱԿԱՐՅԱՆ

34 տարեկան, Գյումրիի համայնք, «Երիտասարդական Պալատ» ՀՈԱԿ-ի տնօրեն

Ծրագրի հիմնական նպատակը համայնքում և համայնքից դուրս **կանանց դերի բարձրացումն էր:**

Ծրագրի խնդիրներն էին՝

1. Իրավաբանորեն չգրանցված, սակայն ակտիվ գործունեությամբ զբաղվող կանանց բերել մեկ ընդհանուր դաշտ՝ **քարտեզագրելով կանանց և նրանց ստեղծած ռեսուրսները՝** մարդկային, նյութական, կրթական, տնտեսական և այլն:

2. Ապահովել կանանց տեսանելիությունը ավելի լայն շերտերի շրջանակներում:

3. Զարգացնել, կրթել և ապահովել կանանց այս շերտին առաջընթաց:

4. Իրավագիտակցության բարձրացման հիման վրա բարձրացնել վերջիններիս հասարակական ակտիվությունը:

«Ես միշտ մտածում էի, որ անչափ դժվար է ուժեղ կանանց հավաքել մի տեղ, ու որ դրա արդյունքում պայթյուն չլինի: Ինձ թվում էր՝ անհնար է հավաքվել մեկ միասնական գաղափարի շուրջ, ու դրանից ոչ մեկը դժգոհ չմնա: Ես գրեթե վստահ էի, որ դա ինձ մոտ չի ստացվի, քանի որ դպրոցական տարիներին ինձ ոչ մի անգամ դասարանի ավագ չընտրեցին: Այս ամենը ինձ թույլ է տալիս ստեղծագործել, լինել ավելի ճկուն ու փորձել կանխատեսել խնդիրները: Այս ծրագիրը բոլոր կանանց մասին էր, հատկապես նրանց, ովքեր դուրս էին մնացել մասնակիցների ցանկից: Ես երբեք չեմ մտածել առաջնորդ լինել, ինձ համար կարևորը գտնելն էր այն մարդկանց, ովքեր ինձ նման վստահ են, որ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ ուժ է: Ես գտել եմ նրանց ու ինձ երջանիկ եմ զգում: Այս ծրագրում բոլորս հերոսներ ենք. Մենք փոճեցինք անել այն, ինչ ցանկանում էինք»:





“

Իրականում ես չեմ սիրում նայել հետ կամ առաջ, քանի որ գերադասում եմ նայել վերել: Ցանկացած դեպքում պիտի միշտ վերև նայես՝ թե՛ թռիչքի, թե՛ հոգու մաքրության համար:

”



«Քաղաքացիական կրթություն կանանց համար» ծրագիր

05



ԼԻԼԻԹ ՂԱԼՈՒՄՅԱՆ

49 տարեկան, Իջևանի համայնքապետարան, կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետ

Ծրագրի նպատակն էր՝ խթանել համայնքի բնակչության մասնակցությունը **որոշումների կայացման** գործընթացում:

Ծրագրի խնդիրներն էին՝

1. Բարձրացնել շահառու կանանց գիտելիքները և **կարողությունները ՏԻՄ գործառնությունների վերաբերյալ:**

2. Ձևավորել ակտիվ կանանց խումբ, նրանց ներգրավել համայնքում առկա խնդիրների վերահամանը, որոշումների կայացմանը:

3. Բարձրացնել համայնքի բնակիչների իրազեկվածության մակարդակը մասնակցային **կառավարման գործընթացների վերաբերյալ:**

«Ճատ ոգևորիչ էր կանանց ակտիվ մասնակցությունը և հետաքրքրվածությունը: Այն, որ մեր կանայք ունեն մեծ պոտենցիալ, դա ակնհայտ է, ծրագրի ընթացքում նրանց մոտ արթնացավ ակտիվ քաղաքացի լինելու ցանկություն: Ձևավորված ակտիվ խումբը շարունակելու է համագործակցել ՏԻՄ-ի հետ և հանդես գալ նախաձեռնություններով: Սա ինձ համար դարձավ ազդակ, որ պետք է սատար լինենք մեր համայնքում բնակվող կանանց»:





“

Ազատվենք կարծրատիպերից, լինենք ակտիվ քաղաքացի, կերտենք մեր ապագան:

”



«Մասնակցային կարիքների գնահատում» ծրագիր

06



ԱՆԱՅԻՏ ԱԲՐԱՅԱՄՅԱՆ

34 տարեկան, Պոռշյանի համայնքապետարան, համայնքային ծառայության առաջատար մասնագետ

Ծրագրի նպատակն է՝ նպաստել համայնքային կարիքների ներառմանը **համայնքային զարգացման** ծրագրի մեջ ակտիվ կանանց միջոցով:

Ծրագրի խնդիրներն են՝

1. Կազմավորել Պոռշյան համայնքում 10 անձից բաղկացած **ակտիվ կանանց խումբ**:
2. Զարգացնել ձևավորված խմբի անդամների կարողությունները մասնակցային, կառավարման, հետազոտության իրականացման, շահերի պաշտպանության և ֆոնդհայթայթման ոլորտում:
3. Մասնակցային **հետազոտության իրականացում** և արդյունքների վերլուծություն
4. Բացահայտված **կարիքների ներկայացում ՏԻՄ-ին** և ջատագովություն:



«Ես ցանկանում էի օգտակար լինել համայնքի բնակիչներին, համայնքի զարգացմանը, բայց իրականում այն ինձ ավելի օգտակար եղավ. հայտնի դեպքերից հետո այս ծրագրի իրագործումն ինձ համար թերապիայի նման մի բան էր: Զարգացնող, համակարգող աշխատանքը ստիպեց նոր հնարավորությունների, նոր ապագայի շունչ զգալ: Այն օգնեց ինձ ավելի խորքային ճանաչել իմ համայնքի բնակիչներին և փորձել նրանց հետ նոր մակարդակի համագործակցային գործընթացների ձևավորմանը»:





“

Ցանկանում եմ, որ յուրաքանչյուր անձ պատասխանատվություն կրի այն երկրի, համայնքի հանդեպ, որտեղ ապրում է, պատասխանատու լինի այն միջավայրի, մարդկանց, բնության, կենդանիների հանդեպ, որոնք ապահովում են իր կենսական գոյությունը: Ծույլ լինելու և ագահ լինելու արանքում պատասխանատու անձն է՝ իրական առաջնորդը:

”

«Սովորել, Գործել, Փոփոխել» ծրագիր



Ծրագրի նպատակն է՝ խթանել Սպիտակ համայնքում պատանիների և երիտասարդների մասնակցությունը թափանցիկ կառավարման և որոշումների կայացման գործընթացներում՝ կարողությունների և հմտությունների զարգացման միջոցով:

Ծրագրի խնդիրներն են՝

1. Զարգացնել Սպիտակ համայնքի 13-18 տարեկան թվով 20 երիտասարդի իրազեկվածության, գիտելիքների և հմտությունների մակարդակը համայնքի թափանցիկ կառավարման, ժողովրդավարության, առաջնորդության, թիմային աշխատանքի, քաղաքացիական պատասխանատվության, կամավորության վերաբերյալ թեմատիկ դասընթացների միջոցով:

2. Ապահովել 13-18 տարեկան թվով 20 երիտասարդի մասնակցություն համայնքային կյանքին ավագանու Նիստերի մասնակցության, **կարիքների գնահատման և ենթադրամաշնորհների իրականացման և կառավարման միջոցով:**

3. Աջակցել համագործակցության ցանցի ստեղծմանն ու համայնքում առկա խնդիրների արագ և **ակտիվ արձագանքմանը ֆեյսբուքյան էջի/խմբի ստեղծմամբ:**



07



ԱՆԱՀԻՏ ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

56 տարեկան, Սպիտակի
համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար

«Ծրագրի ընթացքում, աշխատելով երիտասարդների հետ, հնարավորություն ունեցանք ոչ միայն գիտելիքներ փոխանցել նրանց, այլ մեզ հաջողվեց նաև այդ գիտելիքները ներդնելով՝ իրականացնել համայնքային խնդիրներին ուղղված նախաձեռնություններ: Անկեղծ պետք է լինեմ՝ երիտասարդների հետ աշխատանքը նաև ինձ համար էր հնարավորություն՝ սովորել նրանցից, մասնավորապես՝ Նորագույն ու Նորոյա տեխնոլոգիաներն առօրյայում կիրառելու մասին: Իմ մտքերն այսուհետ երիտասարդների հետ են լինելու, քանզի նրանց հետ է հնարավոր կառուցել ազգային ու անվտանգ երկիր, գնահատել ձեռքբերումը, բացառել արատավորն ու կերտել լուսավոր ապագա»:

“

«Կնոջ խելք, կնոջ խելք, ամեն բանի ելք». սա հաճախ եմ լսել տղամարդկանցից և, իրոք, կյանքը ցույց է տալիս, որ կինը կարող է՝ կարող է գործել, փոփոկել... և սա կոչ է կանանց:

”





ԼԻԼԻԹ ՍԻՆԵՄՅԱՆ

36 տարեկան, ծրագրի գործընկեր, «Սպիտակ երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի համակարգող

«Սովորել, Գործել, Փոփոխել» ծրագիր

«Երիտասարդների հետ աշխատանքը իմ համար ամենահետաքրքիր և հաճելի զբաղմունքներից է, որն որպես առաքելություն որդեգրել եմ դեռ տարիներ առաջ: Երբ դու քեզ զգում ես կարևոր դերակատար մարդկանց կյանքում դրական փոփոխություններ բերելու գործընթացում և իրականացնում ես այն՝ գիտակցելով յուրաքանչյուր քայլ և այդ պրոցեսում արժևորելով բոլոր մասնակիցներին, միաժամանակ, մոտիվացնում ես սեփական անձը՝ էլ ավելի արդյունավետ ծրագրեր իրականացնելու համար: «Սովորել, Գործել, Փոփոխել» ծրագիրը յուրահատուկ հնարավորություն էր աշխատել Սպիտակ համայնքի ամենասրտացավ, ստեղծագործ և յուրահատուկ երիտասարդների հետ, որը հետպատերազմյան Հայաստանում անհրաժեշտ է իրականացնել էլ ավելի խորությամբ, Նվիրվածությամբ և պատասխանատվությամբ, քանզի ինքնօրինակ ուղղորդման մասնակիցն ես լինում երիտասարդների մեջ Նոր որակների սերմանման, համայնքի և սեփական շրջապատի Նկատմամբ պատասխանատվության պարարտ հողի ստեղծման համար»:





“

Կոչ եմ անում կանանց և երիտասարդներին,
որ միշտ հետևեն սրտի կանչին և լինեն
Նախաձեռնող, սեփական կյանքը նոր որակի
և նոր հնարավորությունների համար բաց
պահելու համար:

”

09



ՄԱՐՈՒՅԱ ԲԱԼԱՅԱՆ

37 տարեկան, Ստեփանավան, համայնքի ղեկավարի օգնական

Ծրագրի նպատակն է՝ Ստեփանավան քաղաքում 5 ամիսների ընթացքում նպաստել տեղական մակարդակում կանանց նկատմամբ առկա կանխակալ և կարծրատիպային վերաբերմունքի նվազեցմանը՝ գենդերային մեյնսթրիմինգի վերաբերյալ ՏԻՄ-ի 15 անդամների կարողությունների զարգացման, քաղիասարակության 12 կանանց հզորացնելու, համայնքում կանանց ներուժի, հնարավորությունների նկատմամբ վստահություն սերմանելու և կարծրատիպերը կոտրելու միջոցով:

Ծրագրի խնդիրներն են՝

1. Հարգացնել ՏԻՄ 15 անդամների գիտելիքները գենդերային քաղաքականության, գենդերային մեյնսթրիմինգի վերաբերյալ,
2. Հարգացնել ՀԿ-ներում, ՀՈԱԿ-ներում, համայնքային նախաձեռնող խմբերում ներգրավված կանանց կարողությունները այլընտրանքային ռեսուրսների որոնման, ծրագիր գրելու ոլորտում,
3. Նվազեցնել կանանց նկատմամբ առկա կարծրատիպերը և կանխակալ վերաբերմունքը՝ Ստեփանավանի դեռահասների կողմից գենդերային խտրականության վերաբերյալ ֆորում-թատրոնի ներկայացումների և հաջողակ կանանց (կին առաջնորդների) փորձի տարածման միջոցով:



«Ես նոր և կարևոր դեր եմ ստանձնել՝ դա համայնքային առաջնորդի դերն է, որը ես պատրաստվում եմ պատասխանատվորեն կրել իմ հետագա գործունեության ընթացքում. էթե ոչ ես, ապա էլ ո՛վ կարող է ուղիներ փնտրել համայնքում տարբեր սոցիալական խմբերի կարիքները լուծելու համար»:



“

Հավասար հնարավորությունների դեպքում
մենք կարող ենք ավելին:

”



«YouWom Club (Youth and Women Club)» ծրագիր

10



ՄԱՐԻ ԹԱՆՍՅԱՆ

23 տարեկան, Տաթև համայնքի
ղեկավարի խորհրդական

Ծրագրի նպատակն է՝ խթանել Տաթև խոշորացված համայնքում կանանց ակտիվ ներգրավվածությունը տեղական ինքնակառավարման գործընթացներին՝ շեշտադրելով նրանց կարողությունների զարգացումը և մասնակցության խթանումը:

Ծրագրի խնդիրներն են՝

1. Ստեղծել կանանց և երիտասարդների **այտերևաստիվ ակումբ**
2. Զարգացնել կանանց և երիտասարդների գիտելիքները մասնակցային **ժողովրդավարության ոլորտում**
3. **Նպաստել տեղական ինքնակառավարմանը** կանանց և երիտասարդների ակտիվ մասնակցայնությանը:

«Ծրագրի ընթացքում ես սկսեցի նորովի արժևորել կանանց, ավելի ուժգին հավատալ երիտասարդների ներուժին: Ես հասկանում էի, որ շատ կանայք հետևում տարիներ ու մի ամբողջ կյանք էին թողել, իսկ ծրագիրը նրանց ամբողջովին նոր կյանքի մասին էր պատմում: Ես տեսնում էի, թե ինձ նայելով, ինչպես էին երիտասարդները մոտիվացիա գտնում, ապագայի համար՝ օրինակ, իսկ կանայք՝ ավիստում կորցրած տարիների համար: Տխուր պատմությունները ցավեցնում էին ինձ, միաժամանակ սփոփում՝ մոտիվացիա տալով»:





“ Եվ ինչքան էլ անհավանական թվացող լինի ասածս, այնուամենայնիվ, մենք կարող ենք թեքել ներկայի անիվը, մենք կարող ենք ապագա փոխել, մենք կարող ենք ինքներս լինել մեր ճակատագրի տերը, և ոչ թե ստրուկը, մենք կարող ենք մեր մասնաբաժինն ունենալ մեր երեխաների, մեր համայնքի, մեր երկրի լիարժեք ու լուսավոր ապագայի ստեղծման գործում: Մենք կարող ենք, քանի որ մենք քարից էլ ամուր կանայք ենք և պարզապես խելառ, ավյունով լի երիտասարդությունը:

”



«Կանանց հզորացում և ներգրավվածության խթանում» ծրագիր

11



ՆԱԻՐԱ ԹԱՄԱՋՅԱՆ

50 տարեկան, Լոռու մարզ, գյուղ Կահագնաձորի ավագանու անդամ

Ծրագրի նպատակն է խթանել քաղաքացիների, և, առավել ևս, կանանց ներգրավվածությունը համայնքային որոշումների քննարկման և կայացման գործընթացին:

Ծրագրի խնդիրներն են՝

1. Հաղորդակից դարձնել համայնքի բնակիչներին ՏԻՄ գործընթացներին **բարձրացնելով վերջիններիս իրավագիտակցությունը:**

2. Իրականացնել համայնքային կարիքների մասնակցային գնահատում և **առաջարկների փաթեթի մշակում կանանց խմբի կողմից և փորձագետի ներգրավմամբ:**

3. Իրականացնել ջատագովություն՝ **առաջարկները ներառելով ՏԻՄ-ի կողմից մշակվող Տարեկան Աշխատանքային Պլան:**

«Ի սկզբանե ծրագրի նպատակն է եղել Կահագնաձոր համայնքի կանանց հնարավոր ներգրավվածությունը ապահովել համայնքի զարգացման գործընթացում: Այս ծրագիրը էապես փոխեց կանանց գիտակցական մակարդակը: Իմ հաջողությունը կարող եմ համարել այն, որ ես կարողացա համայնքի երիտասարդ կանանց համախմբել իմ շուրջը, և համայնքի խնդիրները բարձրաձայնել: Հուսամ, ծրագրի ավարտից հետո մի քանի խնդիրների լուծում կստանանք. սա էլ կանանց կխթանի համայնքային գործընթացին ավելի ակտիվ մասնակցելուն»:





“

Ես՝ որպես ՏԻՄ անդամ, կոչ եմ անում բոլոր կանանց ակտիվորեն մասնակցել համայնքի կյանքին և իրենց ներդրումն ունենալ համայնքի զարգացմանն ուղղված գործընթացներին:

”



«Կանանց հզորացում և ներգրավվածության խթանում» ծրագիր

12



ԱՆԻԿ ՂՈՒԱԹՅԱՆ

59 տարեկան, Լոռու մարզ,
Վահագնաձոր համայնք
(ծրագրի գործընկեր)

«Գեղերային անհավասարության խնդիրը մեկօրյա խնդիր չէ: Բոլորս էլ գիտենք, որ ոչ միայն Հայաստանում, այլ ամբողջ աշխարհում կանայք շատ հաճախ դուրս են մնում իրենց իսկ կյանքին վերաբերող հարցերի քննարկումների և որոշումներ կայացնելու գործընթացից: Իմ մեծ ձեռքբերումը կարող եմ համարել այն, որ սովյալ ծրագրի միջոցով փոքր ինչ կարողացա կոտրել այդ կարծրատիպը և համայնքի կանանց խթանել համայնքային գործընթացում ավելի ինքնավստահ վարք դրսևորելու մեջ: Իհարկե, այս ամենը բուռն ընթացք չէր ունենա՝ առանց մասնագետների օժանդակության»:

“

Հենրիխ Հայնեն ասել է. «Պատմությունը ստեղծում են կանայք, սակայն պատմությունը հիշում է լոկ տղամարդկանց անունները»: Կոչս կլինի հետևյալը. պատմության մեջ բացել ևս մեկ էջ, որտեղ մենք՝ կանայքս, խելամտորեն և քաջաբար հասանելի կդարձնենք մեր ծայրը՝ գալիք սերունդների համար բարեկեցիկ ապագայի միտումների տողերով:

”





«Կանայք՝ կանանց համար» ծրագիր

13



ԿԱՐԻՆԵ ՂՈՒԿԱՍՅԱՆ

51 տարեկան, Կանաձոր
համայնք, ավագանու անդամ

Ծրագրի նպատակն է՝ նպաստել Կանաձոր համայնքի ընտրություններին կանանց մասնակցության բարձրացմանը:

Ծրագրի խնդիրներն են՝

1. Բարձրացնել համայնքի կառավարման գործընթացում կանանց ներգրավման կարևորության վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը:

2. Ձևավորել պոտենցիալ թեկնածու կանանց խումբ:

3. Աջակցել թեկնածու կանանց զարգացնելով նրանց գիտելիքները քարոզարշավի կազմակերպման վերաբերյալ:

«Համակարգելով ծրագրային աշխատանքները՝ սովորեցի հաշվետվությունների կազմում և փաստաթղթավորում, ժամանակի կառավարում, առաջնայինը երկրորդականից տարբերակում: Շատ հետաքրքիր ծրագիր էր, ոչ միայն սովորեցնում էինք, այլ նաև սովորում: Համակարգելով ծրագրային աշխատանքները սովորեցի հաշվետվությունների կազմում և փաստաթղթավորում, ժամանակի կառավարում, տարբերակել առաջնայինը երկրորդականի: Սեմինար-քննարկումներին մեծ ինֆորմացիա ստացա ներկա իրավիճակի և Կանաձորի կանանց քաղաքական մոտեցումների վերաբերյալ»:





“

Դու մեկն ես այն կանանցից, ով կոչված է համալրելու կանանց շարքերը քաղաքականության մեջ: Կանանց քաղաքական ու սոցիալ-տնտեսական կարգավիճակը բարելավվում է, երբ մենք ներգրավվում ենք որոշումների կայացման գործընթացներում:

”



«Նոր տեխնոլոգիա, նոր առաջընթաց» ծրագիր

14



ՄԱՐԻԱՄ ՍՏԱՄԲՈԼՅՅԱՆ

60 տարեկան, Ախուրյան համայնք, համայնքային ծառայության բնակարանների սպասարկման և կոմունալ տնտեսության բնագավառի գլխավոր մասնագետ

Ծրագրի նպատակն է խթանել Ախուրյան համայնքում մասնակցային կառավարում ապահովելով Տարեկան Աշխատանքային Պլանի մասնակցային մշակումը:

Ծրագրի խնդիրներն են՝

1. Ձևավորել Ախուրյան համայնքում մասնագիտական աշխատանքային խումբ, որոնք կամավորական հիմունքով կաջակցեն համայնքային կարիքների գնահատման և համայնքի սոցիալական ցանցերի առաջխաղացման գործընթացներում,

2. Ձևավորել համայնքի հիմնախնդիրների ժամանակին և մասնակցային գնահատման համակարգի ներդրմանը՝ օնլայն հարթակների և գործիքակազմի կիրառմամբ:

3. Բարձրացնել Ախուրյան համայնքի ՏԻՄ-ի գործունեության **թափացիկությունն ու տեսանելիությունը համայնքում:**

4. Բարձրացնել բնակիչների, մասնավորապես, երիտասարդների և կանանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին/համայնքային լսումներ, ավագանու նիստեր, ՏԱՊ, զարգացման ծրագրի քննակումներ,

5. Ապահովել կարիքների հիման վրա մշակված առաջարկների փաթեթի ներկայացում ՏԱՊ-ի քննարկմանը:



«Այս ծրագիրն ինձ համար մտքի հեղափոխություն էր՝ ևս մեկ ձեռք բերում, նոր միջավայր, նոր համագործակցություն, նոր շփումներ, որոնք նոր դրական լիցք հաղորդեցին մեր համատեղ աշխատանքին: Մեր թիմի առջև բացվել էր մի նոր աշխարհ, որտեղ յուրաքանչյուր ոք հնարավորություն ստացավ բացահայտելու իր ներսում նոր մարդու կերպար՝ ակտիվ, նախաձեռնող և ստեղծագործ: Մեր սրտերը կարծես լեռներում էր հայկական լեռնաշխարհի հինավուրց գյուղերում, որոնց զարգացման, շենացման փափագը համախմբել էր բոլորիս: Ամենակարևոր ձեռքբերումներից մեկը վստահությունն էր սեփական ուժերի նկատմամբ, մենք չէինք հավատում մեր ուժերին, բայց կանայք փորձեցին, հաջողեցին ու հասկացան, որ կարող են»:

“

Կանայք, մասնակցե՛ք համայնքային որոշումների ընդունման գործընթացին, չե՛ք որ ամեն մի որոշման մեջ դուք սրտի, խղճի ձայնով եք առաջնորդվում: Հայրենիքի համար այս դժվարին պահին Ձեր ներուժը շատ է անհրաժեշտ: Դուք իրապես կարող եք նոր շունչ, նոր ոգի, նոր որակ հաղորդել կառավարման ոլորտում : Միայն Ձեր ներկայությունը մեծ խթան կհանդիսանա տղամարդկանց՝ ավելի բարեխիղճ, ավելի արդյունավետ աշխատելու համար: Հիշե՛ք, որ հայ կինը զորեղ է:

”



«Արհեստը ուժ է» ծրագիր

15



ՀԱՅԿՈՒՇ ՍՏԵՓԱՆՅԱՆ

45 տարեկան, Արենի համայնք, Արփի բնակավայրի համակարգչային օպերատոր

Ծրագրի նպատակն է՝ խթանել կանանց ներգրավվածությունը համայնքում կատարվող աշխատանքներին:

Ծրագրի խնդիրներն են՝

1. Բարձրացնել Արենի համայնքի կանանց, դեռահաս աղջիկների գիտելիքները համայնքային ծրագրերի, ՏԻՄ օրենսդրության, մասնակցային կառավարման, առաջնորդության ոլորտներում:


2. Ակտիվացնել համայնքում կանանց և աղջիկների դերակատարումը **ստեղծելով կար ու ձևի ակումբ:**

3. Ապահովել թիրախ **կանանց մասնակցությունը ավագանու նիստերին:**

«Որպես երեք երեխաների մայր, աշխատող կին, գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացի՝ միշտ զբաղվածեմեղել և թանկեմգնահատելի մժամանակը: Ծրագիրն սկսելուց առաջ ես միայն մտածում էի, թե ինչպե՛ս լցնել գյուղում ապրող կանանց ու աղջիկների առօրյան, հետաքրքրություն առաջացնել համայնքում կատարվող աշխատանքների, ավագանու նիստերի, իրականացվող ծրագրերի հանդեպ: Միտք առաջացավ նրանց համախմբել ինչ որ մասնագիտության շուրջ և զուգահեռ անցկացնել քննարկումներ համայնքում կատարվող աշխատանքների և ավագանու նիստերի շուրջ: Ծրագրի ընթացքում հասկացա, որ կարող եմ կազմակերպել և ղեկավարել



ծրագրեր, որոնց ընթացքում կօգնեմ մասնակից կանանց ծեռք բերել հետաքրքրություն ՏԻՄ աշխատանքների հանդեպ, գիտելիք, վստահություն, մասնագիտություն, ինչո՞ւ՞ չէ, նաև մտահղացում՝ նոր բիզնես սկսելու: Շատ ուրախ եմ, որ կարողացել եմ այս մի քանի ամիսների աշխատանքի շնորհիվ երիտասարդ կանանց կենտրոնում ստեղծել անկյուն, որը շատ կանանց ոգևորելու և նոր գործ սկսելու հիմք կհանդիսանա»:





“ Ես կոչ եմ անում մեր կանանց ու աղջիկներին՝ սիրելք ու հարգելք ձեր ընտանիքները, եղելք ուժեղ, ինքնուրույն, կայացած, սովորելք ողջ կյանքի ընթացքում, ունեցելք նպատակներ, երազանքներ ու ձգտելք հասնել դրանց իրականացմանը, այս ամենի հետ միասին մի մոռացելք, որ հայ եք և միշտ եղելք ՀԱՅԵՑԻ: ”

16



ՓԻՐՈՒՋԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

29 տարեկան, Չարենցավան համայնք, գարգացման ծրագրերի մասնագետ

Ծրագրի նպատակն է՝ նպաստել Չարենցավան խոշորացված համայնքի գյուղական բնակավայրերի 25-45 տարեկան 20 կանանց ներգրավմանը ՏԻՄ-երում որոշումների կայացման գործընթացներում :

Ծրագրի խնդիրներն են՝

1. Բարձրացնել խոշորացված համայնքի գյուղական բնակավայրերի շահառու 20 կանանց անձնային աճը և **իրավագիտակցության մակարդակը 8 հանդիպումների միջոցով:**

2. Իրականացնել գործնական թեմատիկ պիլոտային ծրագիր մասնակից կանանց միջոցով:

3. Ձևավորել կանանց խորհրդակցական մարմին, որը կաջակցի ՏԻՄ-ին որոշումների կայացման մակարդակում:

«Ժամանակի ընթացքում կնոջ դերը ենթարկվել է փոփոխության. բարքերը, ավանդույթներն ու մարդիկ գծել են անտեսանելի սահմաններ ու կնոջը տեղավորել դրանց մեջ: Սակայն այսօր և, ընդհանրապես, միշտ կարևոր է կնոջը մարմնավորված տեսնել հզոր, իրազեկ, կայուն և իր ցանկությունների մեջ հստակ կերպարում: Ծրագրի շնորհիվ մենք մեր համայնքի բոլոր բնակավայրերի կանայքս, սկսեցինք կիսել մեր կարծիքները, մտքերը, համախմբվեցինք միևնույն գաղափարի շուրջ՝ մենք ուզում ենք փոխվել, մենք պատրաստ ենք փոխվել և արդյունքում փոխել մեր աշխարհը՝ այն դարձնելով ավելի գենդերազգային, ավելի հանդուրժողական, ավելի բարեկիրթ, ավելի իրավագիտակից, ավելի ժողովրդավար և ավելի զարգացած: Իրազեկ կինը և պարզապես կինը շատ տարբեր կարող են դրսևորել իրենց միտքը միևնույն խնդրի շուրջ: Սա կարևոր է, քանի որ ոչ բոլորին է հաջողվում երիտասարդ տարիքում լինել առաջնորդ ու ղեկավարել խմբեր: Սակայն մենք չենք պատրաստվում այսքանով բավարարվել, մենք ծրագրից ստացել ենք մեծ էներգիա, դրական անսահման լիցքեր, որոնք ուղղորդում են մեզ դեպի Նոր դրամաշնորհներ, դեպի Նոր նախագծեր»:





“ Սիրելի կանայք, փորձեք ճանաչել ինքներդ ձեզ կյանքի բոլոր դրսևորումներում, շարունակ ինքնակատարելագործվեք, եղեք իրագել, մի սահմանափակեք ձեր կարողություններդ, հավատացեք, դուք կարող եք անել այն ամենն, ինչ ցանկանում եք, եղեք երջանիկ ինքներդ ձեզ համար և միշտ ձգտեք ավելիին. դուք դա կարող եք: Եվ հիշեք, ղ՛վ, եթե ոչ դուք...: ”



17



ՍԱԹԵՆԻԿ ԲԱԼԱԲԵԿՅԱՆ

32 տարեկան, Չարենցավանի համայնքապետարանի, Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

«Այն մեծ էներգիան, ոգևորությունն ու դրական լիցքերը, որ տվեց ծրագրի իրականացումը, անպատմելի են: Սա իմ և Փիրուզա Պետրոսյանի առաջին համատեղ աշխատանքն էր, ու դրա իրականություն դառնալն անչափ կարևոր էր թե մեր ընկերության, թե գործընկերության համար: Ծրագրի ընթացքում մենք ծեռք բերեցինք ավելի շատ առաջնորդական հմտություններ, դարձանք ավելի ինքվստահ մեր խոսքերի ու գործերի մեջ: Երկու կանայք, ովքեր աշխատում են համայնքապետարանում, ունեն

վառ գաղափարներ, սակայն հաճախ չեն կարողանում անցնել տղամարդկանց ստեղծած անգույն պատնեշն ու իրականություն դարձնել իրենց բոլոր գունավոր մտահաղացումները, հնարավորություն ստացան ասելու, որ իրենք կարող են ավելին: Ծրագրի շրջանակներում մենք համախմբեցինք խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերից կանանց մի հարկի տակ և հենց այս միասնական հանդիպումներն են օգնում կանանց խոսելու խնդիրների մասին: Հիմա մենք գիտենք, որ ունենք կանայք, ովքեր պատրաստ են մեզ հետ շարժվելու դեպի ավելի լավ համայնք, պատրաստ են իրենց ծայրն ունենալ որոշումների կայացման մակարդակում, պատրաստ են դառնալ ավագանի, անգամ համայնքի ղեկավար: Մեզ մնում է աջակցել նրանց ու կանանց ոգևորության շղթայական ռեակցիան դարձնել շարունակական»:





“

Սիրելի կանայք, դուք Աստծո լավագույն ստեղծագործությունն եք, ոչ մի այլ էակ աշխարհում չունի այդքան հմտություններ, կարողություններ, ուժ, համառություն, խելություն, ժպիտ ու ձգտում իր մեջ, որքան դուք: Դառնալ այն կինը, որի մասին միշտ երազել եք. հենց սրան պետք է ձգտեք ամեն օր. չկա վաղը, չկա հետոն, կա միայն ներկան ու ձեր երազանքի կինը պետք է կերտվի հենց այսօրվանից: Ուստի մի վարանք և հենց հիմա սկսեք գործել:

”



«Երկու սերունդ հանուն մեկ նպատակի» ծրագիր

18



ՀԱՍՄԻԿ ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ

36 տարեկան, Տաթև համայնք,
Հայիծոր բնակավայրի
վարչական ղեկավար

Ծրագրի նպատակն է՝ նպաստել մանկապարտեզի միջավայրի բարելավմանը կանանց հզորացման միջոցով

Ծրագրի խնդիրներն են՝

1. Բարելավել մանկապարտեզի **նյութատեխնիկական բազան**
2. Բարելավել ՏՄՄ-ի և կանանց համագործակցությունը
3. Զարգացնել **կանանց գիտելիքների մակարդակը ՏՄՄ ոլորտում**

«Այս ծրագիրը շատ ոգևորիչ էր, երբ գիտակցում ես, որ կարող ես ևս մի գործով աջակցել բնակավայրի ավելի բարեկեցիկ ու հարմարավետ դարձնելու գործում: Ծրագրի իրականացման ժամանակ սովորեցի շատ ավելի նոր ու հեշտ տարբերակներով հասնել առջևս դրված խնդիրների լուծմանը՝ քան նախկինում էր ու ևս մեկ անգամ տեսնելով, թե մեր փոքրիկներն ինչպես են ուրախանում, երբ տեսնում են իրենց համար գնված խաղալիքները, գրքերը և կահույքը: Ակամայից գիտակցում ես, որ բոլորս անկախ տարիքից, սեռից կարող ենք մեր համայնքում կատարել փոփոխություն՝ գիտակցելով, որ համայնքը սկսվում է հենց մեզնից: Օրինակ այսպես՝ ծառը ձմռանը լինում է չոր ու անմշակ, գարնանը՝ ծաղկած և խնամված, ամռանը՝ կանաչ, իսկ աշնանը՝ բերքով լի: Իմ կարծիքով համայնքը նույնպես նման է ծառի, եթե մտածում ես կայուն, բարեկեցիկ, հարուստ ու զարգացած համայնք ունենալու մասին, պետք է այն լավ պահես ու խնամես, իսկ եթե չանես, կմնա ծառի նման չոր ու անխնամ»:





“

Կանանց կոչ եմ անում լինել ակտիվ, պատրաստակամ, քայլեր ձեռնարկել, հասկանալով, որ իրենք էլ կարող են իրենց կայացրած որոշումներով ու աշխատանքով մեծ դեր ունենալ համայնքի զարգացման գործընթացի մեջ: «Երազելը՝ խնդիրը լուծելու ճանապարհ».

պետք է երազել ու քայլեր ձեռնարկել երազանքիդ համայնքին հասնելու համար:

”



19



ՆԱՐԵ ՂԱԶԱՐՅԱՆ

31 տարեկան, Սյունիքի մարզ, Կապան համայնքի Շիկահող բնակավայրի վարչական ղեկավար

Ծրագրի նպատակն է՝ նպաստել Շիկահող համայնքի և շրջակա 5 գյուղերի 80 կանանց ներգրավվածությանը հասարակական և քաղաքական կյանքին:

Ծրագրի խնդիրներն են՝

1. Զարգացնել Շիկահող համայնքի և շրջակա 5 գյուղերի 80 կանանց գիտելիքները մասնակցային **կառավարման գործընթացում:**
2. Ձևավորել Շիկահող համայնքի և շրջակա **5 գյուղերի 80 կանանցից կազմված ցանց:**
3. Ներգրավել կանանց տարբեր հասարակական միջոցառումներում:

«Կին լինելը ինձ չի խանգարել ձեռնարկած գործերում հաջողության հասնել: Միշտ ցանկացել եմ իմ փորձով կիսվել մյուսների հետ, որպեսզի կանայք քաղաքական դաշտում ավելի շատ լինեն և մեծ դեր ունենան: Կանանց առաջնորդության դպրոցի դասընթացները հնարավորություն տվեցին համայնքում դրական փոփոխություններ բերելու: Շփվելով տարբեր տարիքի կանանց հետ, հասկացա, որ իրենցից յուրաքանչյուրն իր մեջ ունի ներուժ ցանկացած ոլորտում հաջողության հասնելու համար»:





“

Կանայք շատ պատասխանատու են և գործին նվիրյալ: Այդ ներուժը նրանք պետք է օգտագործեն համարձակ և ճիշտ ձևով, որպեսզի ունենանք պետական ամուր համակարգ:

”



«Կանանց ներգրավվածությունն ու մասնակցությունը տեղական ինքնակառավարման գործընթացում» ծրագիր

20



ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

41 տարեկան, Շողակաթ համայնքի գլխավոր մասնագետ

Ծրագրի նպատակն է՝ խթանել կանանց մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում Շողակաթ համայնքում

Ծրագրի խնդիրներն են՝

1. Ձևավորել ավագանուն կից **կանանց խորհուրդ**
2. **Ջարգացնել կանանց կարողությունները** **ՏԻՄ** և համայնքային կարիքների գնահատման ոլորտում
3. Իրականացնել համայնքային **կարիքների մասնակցային գնահատում**

«Ծրագրի ընթացքում փոխվեց մտածելակերպս և, ինչու չէ, նաև գործելաոճս: Առաջ եկան ավելի մեծ գաղափարներ և դրանք իրագործելու հնարավորություններ, կարողություններ և, իհարկե, ներուժ, որը գոյացավ այս ծրագրի ողջ ընթացքում: Այժմ ես ավելի ինքնավստահ և ավելի հմտորեն եմ կարողանում իրականացնել առաջնորդության հետ կապված գործառնությունները, ծրագրերը և խնդիրների լուծման համար տալիս հնարավոր տարբերակները»:





“ Կանանց կոչ էմ անում, որ նրանք լինեն ավելի ակտիվ, նախաձեռնող և նպատակասլաց: Համայնքի զարգացման գործում կանանց դերը շատ մեծ է և նրանց ակտիվ գործունեությունից է կախված մեր և մեր երեխաների բարեկեցիկ ապագան:

”



«Ավագանու նիստերի թափանցիկության ապահովում» ծրագիր

21



ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

28 տարեկան, Վարդենիս համայնք, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-տնտեսական զարգացման պատասխանատու

Ծրագրի նպատակն է խթանել որոշումների կայացման գործընթացին քաղաքացիների մասնակցությունը:

Ծրագրի խնդիրներն են՝

1. Ձևավորել համայնքի ավագանու նիստերի առցանց հեռարձակման հնարավորություն:

2. Ապահովել համայնքի բնակիչների մասնակցությունը համայնքային զարգացման ծրագրերի նախագծերի քննարկմանը, դրանց առաջնահերթությունների որոշմանը, համայնքային խնդիրների այլընտրանքային լուծումների առաջարկմանը

3. Բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների թափանցիկությունը և հաշվետվողականությունը

«Յամայնքի մի խումբ ակտիվ երիտասարդների հետ անդադար ուսումնասիրում ենք համայնքային խնդիրները, կատարում վերլուծություն և փորձում ՏԻՄ-ի հետ գտնել խնդիրների լուծման ուղիներ: Անընդհատ նորը սովորելու ձգտումը ինձ մղում է մասնակցել տարբեր կազմակերպությունների կողմից առաջարկվող դասընթացներին, որոնցից մեկն էլ «Կանանց առաջնորդության դպրոց»-ի դասընթացներն էին: Մինչ դասընթացին մասնակցելը և ծրագրի մեկնարկը ունեցել եմ ՏԻՄ-ում աշխատանքային փորձ և հենց դա էլ իմ մեջ առավել մեծ հետաքրքրություն առաջացրեց համայնքային կյանքում կանանց դերի մեծացման, հզորացման, նրանց ձայնը լսելի դարձնելու գործընթացին իմ մասնակցությունը ցուցաբերելուն: Որպես առաջնորդ կին, իմ օրինակով այլ կանանց ցույց եմ տալիս, որ իրենք ևս կարող են դառնալ առաջնորդ, որը կհանգեցնի դրական փոփոխության իրենց համայնքում: Յուրաքանչյուր կին կարող օղակ է, ունի նույն հնարավորություններն ու կարողությունները, ինչ ցանկացած տղամարդ, մեր երկրի կայուն, հավասարաչափ զարգացման համար անհրաժեշտ է օգտագործել կանանց և տղամարդկանց գիտելիքներն ու կարողությունները հավասարապես՝ բացառելով խտրականությունները: Այս ծրագրի իրականացմամբ ես հասկացա, որ կարող եմ ինքս դառնալ նախաձեռնության հեղինակ, լինել առաջնորդ և ինքնուրույն բացահայտել ու բարձրաձայնել ընդհանուրի շահերից բխող կարևոր նշանակության հիմնախնդիրներ»:



“

Սիրելի կանայք, երբեք մի վախեցեք սկսել նորը, լինել որևէ նախաձեռնության հեղինակ և ունենալ առաջնորդի դեր:

”



«Նոր մարդիկ, նոր գաղափարներ» ծրագիր

22



ՇՈՒՇԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

25 տարեկան, Եղեգիսի համայնքապետարան, տնտեսական զարգացման պատասխանատու


Ծրագրի նպատակն է՝ խթանել համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

Ծրագրի խնդիրներն են՝

1. Ապահովել բնակիչների մասնակցությունը ՏԱՊ, համայնքային բյուջեի, ավագանու նիստերի և այլ ծրագրերի մշակմանը:

2. Մշակել և ներդնել մասնակցային կառավարման ժամանակակից մոդել:

3. Առաջնային 5 հիմնախնդիրները, որոնք բացահայտվել են մասնակցային գնահատման արդյունքում, 2021 թվականին ներառել 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանի նախագծում:



«Նոր մարդիկ, նոր գաղափարներ» ծրագրի ընթացքում հասկացա, որ ես ինձ զգում եմ ինչպես «ծուկը ջրում», որ սա հենց այն ոլորտն է, ինչ ես 7 այսքան ժամանակ փնտրում էի, և հնարավոր է հետագայում այս ոլորտում ավելի խորացնեմ իմ գիտելիքները և հմտությունները և սա դառնա հիմնական զբաղմունք, նշեմ որ սա իմ առաջին այսպիսի ծրագիրն էր: Այս ընթացքում հասկացա, որ համայնքում ակտիվ լինելն ու ծրագրեր իրականացնելն օգնում է ինձ դառնալ լավ առաջնորդ ու համայնքում դրական փոփոխություն բերող անձ»:



“

Կանանց կարող եմ միայն մեկ կոչ անել.
զբաղվեք այնպիսի գործունեությամբ, որտեղ
դուք ձեզ լիարժեք և երջանիկ կզգաք:

”



«Համայնքի առաջնորդ կանանց խմբի հիմնում» ծրագիր

23



ՄԵԼԻՆԵ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

36 տարեկան, 33 Լոռու մարզ, Մեծավան համայնքի ղեկավարի տեղակալ

Ծրագրի նպատակն է՝ Նպաստել Մեծավան համայնքում մասնակցային կառավարման կայացմանը կանանց ներգրավման միջոցով:

Ծրագրի խնդիրներն են՝

1. Զարգացնել Մեծավան համայնքի 10 կանանց գիտելիքներն ու կարողությունները ՏԻՄ ոլորտում:

2. Ապահովել համայնքապետարանի կողմից ՏԱՊ-ի առավել մասնակցային և կարիքահեն մշակումը:

«Օգնելով համայնքում կանանց ներուժի բացահայտմանը, նրանց դերի բարձրացմանը, իրենց անձնական աճին ձգտելուն, ես նույնպես ունեցա մեծ ձեռքբերում՝ հրաշալի թիմ, որի հետ հաճելի է մշտապես համագործակցել և աշխատել: Մինչև ծրագրի ավարտը ինձ մոտ ստացվեց համայնքից թվով չորս կանանց ակտիվացնել ՏԻՄ-ի աշխատանքներում: Ինձ համար շատ կարևոր է, որ գեթ մեկ կնոջ առօրյայում կարողացել եմ իր համար դեպի դրականը ինչ-որ բան փոխել»:





“

Սիրելի՛ և հարգելի՛ կանայք, Ձեր փոխարեն ոչ ոք չի կարող Ձեր հնարավորություններին տեր կանգնել: Յուրաքանչյուր ընձեռված հնարավորության դեպքում բացահայտեք Ձեր պոտենցիալը և օգտագործեք այն:
«Բնությունը կնոջն ասել է՝ գեղեցիկ եղիր, եթե կարող ես, իմաստուն՝ եղիր, եթե ցանկանում ես, բայց շրջահայաց պարտավոր ես լինել» - Բոմարշե

”



«Ակտիվ կանանց ակումբի ստեղծում» ծրագիր

24



ԱՐՄԻՆԵ ԽԱՍԻԿՅԱՆ

49 տարեկան, Շիրակի մարզ,
Ամասիա համայնքի գլխավոր
մասնագետ-հաշվապահ

Ծրագրի նպատակն է՝ Խթանել Ամասիա համայնքի կանանց մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

Ծրագրի խնդիրներն են՝

1. Բարձրացնել Ամասիա համայնքի առնվազն 15 կանանց իրազեկության մակարդակը **ՏԻՄ գործունեության վերաբերյալ:**

2. Բարձրացնել կանանց նախաձեռնողականությունը մասնակցելու համայնքային կյանքին՝ ձեռնարկատիրական հմտություններ տալու միջոցով:

3. Ձևավորված նախաձեռնող խմբի շրջանակներում համայնքային կարիքների վերհանում և **առաջարկների փաթեթի ներկայացում ՏԻՄ-ին:**

«Այս ծրագրի ընթացքում ավելացավ վստահությունս կարողություններիս նկատմամբ: Իմ կարծիքով դա շատ կարևոր է, քանի որ եթե վստահ ես ուժերիդ, ուրեմն կարող ես անել ավելին, քան նախկինում ես արել: Այժմ ես գիտեմ ինչ անել, և ինչպես անել: Իսկ իմ մեջ կատարված փոփոխությունների մասով կարող եմ ասել, որ այս ծրագիրը իմ իրագործած առաջին ծրագիրն է, այսինքն սկիզբն է: Աշխատանքի բերումով ես շատ զբաղված եմ, և չէի պատկերացնում, որ հնարավոր կլիներ աշխատանքին զուգահեռ, հասարակական կարգով, այլ գործողություններ իրականացնել, սակայն եթե ինչ որ մի բան անում ես ոչ քեզ համար, այլ ուրիշների, դա ոգևորիչ է և մեծ էներգիա է տալիս: Իսկ այդ էներգիան նոր գաղափարներ է ծնում և այդ գաղափարների իրականացման գործողությունների է մղում»:





“

Ես կոչ եմ անում համայնքի կանանց մասնակցել առաջիկա համայնքի ավագանու ընտրություններին: Հավատացեք ձեզանից շատ բան է կախված: Եթե ինչ-որ բանից դժգոհ եք, ապա դուք ունեք հնարավորություն՝ փոխելու այն, միայն ցանկություն է պետք:

”

